

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

էջ

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հ. Ե. Փ. - Յովհաննէս Իգ. Ս. Քաջանա-
յապետ 229

ARTICLE DE FOND

P. E. P. — S. S. le Pape Jean XXIII 229

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Պատմութիւն Հա-
յոց Ազգամատոյցին (Շար.) 245

LITURGIE

HATSOUNI P. VARDAN — Histoire du Bré-
viaire Arménien (Suite) 245

ԳԻՏԱԿԱՆ

ԶԻՆՈՅԵԱՆ ԲԺ. Մ. - Մարդկային բնոյթ և
յոզնածութիւն 253

SCIENCE

TCHILOYAN Dr. M. — La nature humaine et la
fatigue 253

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎԱԷՓԵԱՆ Հ. ԱԼԵՔՍԻՍ. - Արարիկ և
իր բարբերը (Շար. և Վերջ) 258

ETHNOLOGIE

HOVSEPIAN P. ALEXIS — Arabkère et ses
moeurs (Suite et fin) 258

ԳՐԱԿԱՆ

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ. - Արքակազմի 257
— — — — — Ակնէր 278

LITTERATURE

ARSENE YERGATH — Arkhakaghni 257
— — — — — Aknère 278

ՏԷՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ Հ. ՍԱՀԱԿ. - Արչակ թա-
ղաւոր (Ողբերգ. հինգ արարով: (Շար.) 265

DER MOVSESSIAN P. SAHAK — Le Roi
Archak (Suite) 265

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Տ. Ն. Հ. Ն. - Հայաստանէն - Ս. Ղազար 279

ECHO ARMENIEN

P. N. D. N. — De l'Arménie à St. Lazare 279
— — — — — Donations à l'Imprimerie de St.
Lazare 281

— — — — — Նուիրատուութիւններ Մխիթարեան Տը-
պարանին 281

*** — Donations à la Bibliothèque et au
Musée de St. Lazare 283

*** Նուիրատուութիւններ Մխիթարեան Մա-
տենադարանին և Թանգարանին 283



1843 - 1958
ՀԺԶ. ՏԱՐԻ

ԹԻՒ 11 - 12

ՆՈՅՆՄԱՐԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVI^e année, 1958, N. 11-12 Novembre - Décembre

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻԳ. Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

« Օրհնես՛ր եկեալ յանուն Տեառն »

Պիոս Ժ. Բ. մեծ Քահանայապետին յեղակարծ մահով սուգի մտած էր հա-
մօրէն կաթողիկէ եկեղեցին տիեզերքի բոլոր ընդարձակութեան մէջ: Սգակից
էր անոր ամբողջ աշխարհ, ազգեր ու պետութիւններ: Եւ այնքան մեծ էր
սուգը՝ որքան մեծ եղած էր հանգուցեալը իր անգուցական տիպարով, իր
տիեզերական պատգամներով, իր անմահ գործերով, իր հոգեկան եւ մտաւոր
բացառիկ ձիրքերով: Վախճանէր էր Հովնապետը եկեղեցւոյ, Գլուխը կաթո-
ղիկէ աշխարհին՝ լուսաշող հետեով մը որ անջնջելի պիտի մնայ եկեղեցւոյ
եւ ազգերու պատմութեան մէջ:

Բայց անգուլիս չէր կրնար մնալ Աստուծոյ եկեղեցին. չէր կրնար պակսիլ
Հովնապետը Քրիստոսի տիեզերասփիւռ հօտին՝ որուն անդամները ամէն
ազգէ, ամէն լեզուէ, ամէն ցեղէ աշխարհիս չորս ծագերէն հաւատով եւ սի-
րով կը մային իրենց Գլխուն, անոր միջոցով կ'ապրին որպէս անդամ Ս. եկե-
ղեցւոյ եւ անոր հետ զօղուած՝ կը միանան նոյն ինքն Գերագոյն Գլխուն եւ
աներեւոյթ Հովնապետին որ Քրիստոս է:

Եւ ահա կաթողիկէ եկեղեցւոյ Ծերակոյտը կազմող Ծիրանաւոր Հայրե-
բու մեծ ժողովը - որուն մէջ կը փայլէր հայ ազգի մեծ գաւազն ալ Գրիգոր
Պետրոս Ժ. Բ. Աղանանեան կաթողիկոս Պատրիարք որպէս արժանաւոր քեկ-
նածու Քահանայապետական մեծ աթոռին - եռօրեայ համագումարներու վեր-
ջին նիստին, 28 Հոկտեմբերի երեկոյեան դէմ կ'ընտրէր Աստուծոյ ընտրելին,
եւ պատգամը կը հնչէր Հոռմի եւ համօրէն աշխարհի քէ վեներելի Պա-
տրիարքը Աննեւոյ Ռոմֆալի Ծիրանաւորը Քահանայապետական աթոռը կը
բարձրանար Յովհաննէս Իգ. անունով՝ Հովնապետ կաթողիկէ եկեղեցւոյ,
այնպիսի խանդավառ ցոյցերով որոնք դիրքին չէ նկարագրել:

* * *

Նորընտիր Ս. Քահանայապետը, որ իր հանգուցեալ հօր յիշատակը յարգելով Յովհաննէս անունը կ'ընտրէր, զաւակն է գրեթէ անծանօթ ու խոնարհ գիւղի մը *Sotto il Monte* - Լեոնոտն կոչուած՝ Պերկամոյ նահանգին մէջ. ծնած 25 Նոյեմբեր 1881ին, շառաւիղ երկրագործ բազմանդամ ընտանիքի մը, որուն մեծագոյն հարստութիւնը քրիստոնէական ջերմ հաւատքն էր եւ նահապետական անբասիր կենցաղավարութիւնը:

Աննեւոյ ուշիմ մանուկը այդ մահուր միջավայրին մէջ սնած բարեպաշտութեամբ եւ ուսմունքով՝ ծաղիկ հասակէն սիրով հետեւեցաւ Աստուծոյ քաֆուն ձայնին որ զինքը եկեղեցական վիճակին կը կոչէր: 1892-1900 նա յաջողութեամբ աւարտած իր միջնակարգ եւ իմաստասիրական ուսումները Պերկամոյի կղերանոցին մէջ, կ'անցնէր Հոռմ եւ հոն աստուածաբանական ուսումները կը կատարէր մինչեւ 1904, ձեռնադրուելով քահանայ նոյն տարւոյ Օգոստոս 10ին:

Նորընծայ քահանան բախտաւոր եղաւ ապրելու Պերկամոյ քաղաքին Առաջնորդ մեծահամբաւ Ռատինի - Թետեսի եպիսկոպոսին ձեռքին տակ որպէս քարտուղար, նուիրուելով միաժամանակ հմտանալու հայրախօսական գիտութեան մէջ եւ այդ իննամեայ շրջանին (1905-1914) ձեռնհասօրէն աւանդելու եկեղեցական պատմութեան եւ Հայրախօսութեան դասեր իր քեմին կղերանոցին աշակերտութեան:

Վրայ եկաւ համաշխարհական առաջին պատերազմը. Ռոմֆալի քահանան 1915-1918 ծառայեց իտալական բանակին մէջ իր հոգեւոր դերով եւ ծաւալեց ամէնուրեք իր բարութեան եւ բարեպաշտութեան բոլորը:


Ռոմֆալի նրազն էր որ կը փայլէր. ու ահա եկեղեցւոյ Պետը Բենեդիկտոս ԺԵ. զինքը Հոռմ կը կանչէր գործելու Հաւատոյ տարածման Ս. Ժողովին մէջ, ուր օրինակելի եղաւ խօսքով ու գործով:

Յաջորդ Ս. Պապը Պիոս ԺԱ. 1925ին զինքը զրկեց Պուլկարիա որպէս Առաքելական այցելու. այդ առիթով էր որ ստացաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

Ռոմֆալի եպիսկոպոսը իր նոր առաքելավայրին մէջ այնքան մեծ սէր եւ համակրութիւն շահեցաւ բոլոր համայնքներէն՝ որքան ազնիւ եւ շնորհալի էր իր խօսքն ու վարմունքը որով կը յաջողէր առաւելագոյն բարիք սփռել: Հոն էր որ յատուկ սիրով կապուեցաւ եւ գնահատեց տեղւոյն հայ Առաջնորդը հանրածանօթ Յովակիմեան Սրբազանը. եւ ստէպ իր յուշերուն մէջ կը պատմէր այդ անբասիր եկեղեցականին մասին, թէ ինչպէս իր միջոցով Պիոս ԺԱ. Ս. Պապը օրհնութիւն եւ մետալիոն դրկած էր, ինչ որ մեծ գոհունակութիւն եղած էր յիշեալ Սրբազանին: Նոյն Ս. Պապը 1935ին զինքը կը զրկէր Կ. Պոլիս որպէս Առաքելական Նուիրակ Թուրքիոյ եւ միանգամայն Յունաստանի. պաշտօն գոր վարեց նա մինչեւ 1944, թողլով հայ եւ օտար հասարակութիւններուն եւ անոնց կղերին քով լաւագոյն տպաւորութիւններ իբրեւ ընտիր եկեղեցականի որ բարութիւն եւ սէր կը տարածէր իր շուրջը:

Դժբախտաբար պարագան չի ներեր երկարել եւ արձանագրել հոս այն յուշերը գոր ինք համով ու հոտով, օծուն ու գուարթ ոքով սովոր էր պատմել մեզի վեներտիկ եղած շրջանին, միշտ պատմական շինիչ օրինակներով:

Պիոս ԺԲ. յատուկ նախընտրութեամբ զինքը Պուլսէն Փարիզ զրկեց 1944ին որպէս Պապական Նուիրակ փրանսական կառավարութեան մօտ:



Ն. Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻԳ. ՍՐԲՁ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ



Թէեւ դժուարին եւ փափուկ պաշտօն էր, սակայն Գերայ. Ռոնֆալլի յաջողեցաւ իր իմաստութեամբ եւ շնորհալի ու մարդասէր նկարագրով շահիլ բարձր շրջանակներուն ու նաեւ անձնատրուքիւններու համակրութիւնը, որով կրցաւ լաւագոյն կերպով ծառայել եկեղեցւոյ շահերուն՝ յանուն հոգիներու փրկութեան:

Նա Փարիզ մնաց մինչեւ 1953, երբ վենետկոյ Ակոսքիւնի պատրիարքին մահով՝ նոյն Պիոս Ժ.Բ. Գերայ. Ռոնֆալլի կ'ընտրուէր Պատրիարք վենետկոյ. եւ այդ առիթով Ծիրանաւոր իր գլխարկը կ'ընդունէր Ֆրանսայի Նախագահին ձեռքէն՝ համեմատ հին սովորութեան եւ մենաշնորհի որ Ս. Աթոռէն տրուած էր քրիստոնեայ պետութեանց գլուխներուն:

Զենք կրնար զանց ընել յիշելու Գերայ. Ռոնֆալլիի բարեացակամութիւնը Փարիզի հայ հասարակութեան հանդէպ, ու մանաւանդ իր բարեկամական մըտերիմ յարաբերութիւնը Մուրատեան վարժարանի մեր Հայրերուն հետ: Նա եղբայրական սիրով ու մտերմութեամբ կ'ապուած էր վարժարանի տեսչին՝ ողբ. Հ. Սահակ Տէր Մովսէսեանի հետ, մտերմութիւն եւ սէր՝ զոր շարունակեց վենետիկ, եւ մեծ սուգով ողբաց անոր տարածամ եւ աղետալի մահը 1956ի Ծննդեան տօնին օրը:

Ցոյց տալու համար իր սէրը Մխիթարեան Միաբանութեան եւ յատկապէս իր պաշտամունքը մեր Երանաշնորհ Հիմնադրին՝ Մխիթար Աբբաօր հանդէպ, 1949ին մեծ փափաքով Փարիզէն վենետիկ եկաւ եւ մասնակցեցաւ անոր մահուան երկհարիրամեակին առիթով տեղի ունեցած մեծ հանդէսներուն, մտերմանալով այդ առիթով Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան Գլխուն եւ Եպիսկոպոսներուն հետ:

Եւ ահա զինքը կը գտնենք վենետիկ որպէս Ծիրանաւոր Պատրիարք. 15 Մարտ 1953ին: Երկար էջեր պէտք էին պատմելու համար իր այցելութիւնները վանքիս, իր մասնակցութիւնները մեր հանդիսաւոր պատարագներուն եւ ընտանեկան նաշերուն. իր յուշերը իր անցեալ կեանքէն, իր շինիչ եւ օծուն խօսքերը, իր յատուկ գուրգուրանքը Միաբանութեանս եւ իր մայրավանքին հանդէպ, ուր սիրելի էր իրեն ստէպ հանդիպիլ, երբեմն մեր բով գիշերել՝ երբ հարկը կը պահանջէր: Ու ամէնուս հետ հայր էր եւ բարեկամ եւ մտերիմ:

Իր ազնիւ եւ բարի հոգւոյն իբրեւ ցուցանիշ գէթ մէկ կամ երկու դրուագ պատմենք այստեղ շատերէն՝ զոր չենք կրնար մոռնալ:

Տարւոյս Յուլիսի 17ն էր. Միաբանութիւնս իր Ընդհ. Ժողովին մէջ վերընտրած էր Գերայ. Սրապիոն վ. Ուլուռնոսեան իբրեւ Ընդհ. Աբբահայր Ուխտին: Ուրախ լուրը հասած էր ականջը Ծիր. Ռոնֆալլիի, որ իսկոյն կը փութար մեր վանքը, կ'ողջագուրէր Աբբահայրը ուրախակցելով իրեն եւ միանգամայն ֆաջալերելով որ Միաբանութեան եւ Աստուծոյ իր վրայ դրած խաչը սիրով եւ ֆաջութեամբ տանէր յանուն Միաբանութեան եւ ազգին մեծագոյն բարւոյն:

Նոյն տաճ ընդունելութիւնը կ'ընէր վենետիկ ֆաղափ եկեղեցականներուն եւ ժողովրդեան վերապահուած ունկնդրութեան ժամանակ տարւոյս Նոյեմբերի 4ին, վատիկանի մէջ, իր քաղաքութեան օրը, վենետիկի եկեղեցականներէն առաջ Ուխտիս Ընդհ. Աբբաօր հետ մտերմօրէն ողջագուրուելով եւ հայրական սրտապնդիչ խօսքեր ըսելով:

Այս առիթով կ'արժէ յիշել թէ երբ լսեց նա որ վազգէն Ա. վեհափառ Կաթողիկոսը վենետիկ պիտի գար, Ս. Ղազար այցելելու եւ իր ուխտը կատարելու:



ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՐԻԱՐԿ ԾԻՐ. ՌՈՆԲԱԼԼԻ
ԵՒ ՈՒԽՏԻՍ ԳԵՐԱՅ. ԱԲԲԱԶԱՅՐԸ ՍՐԱՊԻՈՆ ՎՐԴ. ՈՒԼՈՒՆՈՅՆԸ
Ս. ՂԱԶԱՐՈՒ ՊԱՐՏԵՋԻՆ ՄԵՋ (26 - 4 - 1953)

(26 / 3 / 1956), շատ ուրախացաւ եւ շատ ազնիւ ու սիրալիր արտայայտութիւններ ունեցաւ անոր հանդէպ: Եւ թէպէտ հնարաւոր չեղաւ վեհափառին կողմէն այցելութիւն մը, որուն ինք պատրաստ էր սիրով փոխադարձելու, սակայն ուրախ եղաւ եւ ֆաջալերական խօսքերով ըսաւ մեզի որ արժանավայել ընդունելութիւն մ'ըլլար անոր ինչպէս կը պահանջէր սէրը եւ անոր աստիճանը: Պահ մը կանգ առնենք վենետիկ ուր Ծիրանաւոր Ռոնֆալլի Հովիւն է վենետիկի: Իր շինիչ կենցաղն է որ սիրելի ըրաւ զինքը իր ժողովուրդին եւ ամէնուս:

Անձնուէր ու առաքելական հոգի՝ վաղայարոյց էր. ժամը 4ին արդէն արթուն էր. աղօթք, ժամերգութիւն, հոգեշահ ընթերցում եւ մտածական: Ժամը 7ին կը պատարագէր ու համեստ նախաճաշէ մը վերջ որ պարզ կաթ էր եւ պըտուղ մը, կը սկսէր իր հովուական կեանքի գործերը: Ժամը 10ին՝ ունկնդրու-

քիմները՝ որոնք կը տեւէին մինչեւ ժամը մէկ: Ամէնուն համար ունէր իր հայ-
րական խրատը, քաջալերութիւնը եւ լուսամիտ խորհուրդը:

Ժամը 1ին կը նաշէր. ապա իր այցելութիւնը Ս. Հաղորդութեան եւ հագիւ-
կէս ժամ հանգստէ վերջ դարձեալ աշխատանք, անխոռով, մեքոսիկ, խորանա-
լով հարցերուն մէջ: Կը նախագահէր ապա քեմական Յանձնաժողովներու կամ
կը նուիրուէր Պատրիարքական դիւանի եւ քեմական աշխատութիւններու:
7,45ին կը հաւաքէր վարդապետ ու ծառայ, դռնապան, սենեկապան ու անոնց
հետ Տիրամօր կ'ուղղէր վարդարանի աղօթքը. ժամը 8ին ընթրիք ու յետոյ
կ'ամփոփուէր իր գրասենեակը եւ 10ին գիշերային հանգիստ:

Հովուական պաշտօնի հարկը սակայն, կարեւոր ուսումնասիրութեան մը,
կամ քարոզի մը կամ բանախօսութեան մը պատրաստութիւնը զինքն արքուն կը
պահէին շատ անգամ մինչեւ արշալոյս:

Ընթերցումը իր սնունդն ու հարստութիւնն էր եւ հովուական պաշարը:
Իր ընթերցման գրքերը՝ Աստուածաշունչը, Եկեղեցւոյ Ս. Հայրերը,
Ֆրանսայի մարտարախօսները, Պատմութիւն Եկեղեցւոյ, Սրբոց վարքերը, դի-
ւանական հետազոտութիւններ, ծիսական եւ հովուական գործեր:

Եւ ասոր համար է որ ոչ միայն իր քարոզներն ու բանախօսութիւնները
այլ եւ ընտանի խօսակցութիւնը այնքան համեմատած էր, շինիչ եւ օծուն եւ հո-
գեւոր կեանքի դասերով լի:

Գերագոյն բարի հովուին պէս կ'ապրէր իր ժողովրդեան մէջ, հոգածու իր
բահանաներուն, սիրող մանուկներուն:

Շարժուն ու գործունեայ՝ զինքն կը գտնենք Արեւելք՝ Լիբանան, դէպի
Արեւմուտք՝ Լուրտի մէջ: Կ'երթայ օրհնելու, քաջալերելու ամբոյսները եւ նա-
խագահելու Ս. Հաղորդութեան ժողովներուն Թորինոյ, Լեչչէ, Փատովա, Պել-
լունոյ, Վիչենցա, Վերոնա, Ֆայենցա, Փալերմոյ եւն. 1953-1958:

Ծիսական հոգի ունէր. ջանքն էր որ ժողովուրդը անոր մասնակցէր դրա-
պէս: « Պարտ է եպիսկոպոսին լինել... հիւրասէր, բարեսէր » կ'ըսէր ու աս-
պընջական էր սիրալիր ամէն եպիսկոպոսի որ Վենետիկ կը հանդիպէր. նոյնպէս
ստէպ բահանաներուն:

Կը սիրէր ջերմացնել, շարժել ժողովրդեան սիրտը տօներով, հանդէսնե-
րով, հրաւիրելով ձայնաւոր պատարագի կամ քարոզի իտալացի եւ օտար ծի-
րանաւորներ, եպիսկոպոսներ: Այսպէս իր հրաւերին վրայ այս տարի եկաւ
Վենետիկ եւ Ս. Մարկոսի ոսկեղէն տաճարին մէջ քարոզեց Գերբեջանիկ
Աղանանեան Կաթողիկոս 25 Ապրիլին, այդ առիթով էր որ իտալերէն եւ
ֆրանսերէն քարոզին հետ առաջին անգամ հայերէնն ալ լսեցուց այդ սրբա-
վայրի կամարներուն տակ:

Իր նկարագրին յատուկ գծերն են պարգուքիւն, սէր՝ խոնարհներուն,
մանուկներուն, հիւանդներուն հանդէպ: Աղօթքի եւ ուսման մարդ, որով եր-
բեք շրջագայութեան չէր ելլէր, ոչ Փարիզ եւ ոչ Վենետիկ: Իր ամէնէն մեծ
սուգերուն մէջ ընտանեկան պարագաներուն մահով գիտէր համակամիլ, ըսե-
լով. « Աստուծոյ կամքը՝ մեր խաղաղութիւնը »:

Չէր սիրէր պաշտօնական ձեւեր եւ ունկնդրութիւններ. համբերատար ու
հեզաբարոյ՝ գիտէր ամէնքը խրատել, շինել եւ իր օծուն խօսքով խաղաղել:
Լաւատես՝ կեանքին հանդէպ. կը խօսէր միշտ անձերու դրական կամ լաւ
ձիրքերու մասին. եւ կը խորհէր թէ լաւ խօսակցութիւնը եւ սիրալիր վերաբե-

քումը մարդս կը տրամադրեն Աստուծոյ հետ խօսելու մտերմութեամբ: Ահա
մարդը, ահա Աստուծոյ բահանան եւ եպիսկոպոս-Հովիւը:

Եւ երբ Աստուծոյ անհասանելի տրամադրութեամբ ընտրուած Գլուխ եւ
Առաջնորդ Կաթողիկէ Եկեղեցւոյ, կարծես ուզելով իսկոյն գոհացնել աշխարհի
հետաքրքիրութիւնը թէ ի՞նչ պիտի ըլլար իր ուղղութիւնը, իր գործունէու-
թեան նկարագիրը, նա Նոյեմբեր 4ին, իր գահակալութեան կամ քաղաքու-
թեան հանդիսաւոր օրը շեշտելով ամբողջ մարդկութեան թէ իր պաշտօնով
պարտական է ներկայացնելու երկրիս վրայ նոյն ինքն Քրիստոսը՝ պատգամեց
« Այդ աստուածային վարդապետութիւնը եւ իր մեծ դպրոցը կ'ամփոփուին
իր խօսքերուն մէջ. Սորվեցէ՛ք ինձմէ՛ հեղ եւ խոնարհ ըլլալ: Ուրեմն մեծ հե-
գութիւն եւ խոնարհութիւն »:

Եւ միեւնոյն ժամանակ կը ծանրանար թէ «Մեր սրտին մօտիկ է առանձ-
նայատուկ կերպով Հովուի պաշտօնը ամբողջ հօտին: Մարդկային բոլոր միւս
յատկութիւնները՝ գիտութիւն, արթնամտութիւն, դիւանագիտական վար-
մունք, կազմակերպչական ձիրքեր՝ կրնան զարդը կազմել եւ լրացուցիչը Քա-
մունք, հանապապետական վարչութեան, բայց ամենեւին չեն կրնար գայն փոխանակել »:

Եւ գիտակից իր պաշտօնին՝ որով իրեն կը յանձնուէր Աստուծմէ բոլոր
քրիստոնեայ հօտը, իր առաջին պատգամին մէջ, կաթողիկէ հաւատացեալ-
ներուն ուղղած խօսքէն յետոյ ինքզինքն պարտական կը համարէր սիրոյ եւ
միութեան հրաւիրել բոլոր անոնք որ բաժնուած կ'ապրին Ընդհանրական Եկե-
ղեցւոյ կեդրոնէն, շնորհալի կերպով շեշտելով՝ թէ Կաթողիկէ Եկեղեցւոյ հետ
դիմաց կեդրոնէն, շնորհալի կերպով շեշտելով՝ թէ Կաթողիկէ Եկեղեցւոյ հետ
միանալով՝ իրենց հայրենի սեփական տունը կը դառնան եւ ոչ օտարին:

Եւ ահա Կաթողիկէ Եկեղեցւոյ Հովուապետը եւ իր վարչութեան հոգին,
ծրագիրն ու նկարագիրը:



ՓԱՐԻԶԻ ԱՌԱՔԵՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ ԳԵՐՊՄ. ՌՈՆԲԱՆԼԻ

Եւ ՀԱՅ ԿԹՂ. ՆՈՒԻՐԱԿԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԷՋ (9 - 9 - 1950)
Զատէն աջ - Գերպոյ. Ներսէս Արք. Թայրոյեան, Գերպոյ. Պետրոս Արք. Քե-
տիմեան, Գերպոյ. Սրապիոն Արք. Թայրոյեան, Վսեմ. Գերբեջ. Կրդ.
Գրիգոր-Պետրոս Ժե. Աղանանեան, Գերպոյ. Ռոմֆալի,
Գերպոյ. Լ. Արք. Պարանեան:

Քահանայապետական ընտրութիւն, գահակալութիւն, քաղաքութիւն, հանդէս եւ ուրախացութիւններ ի պատիւ Գահին ու Գահակալին:

Եւ անշուշտ պատշան է գովեն ու փառքը երգել քէ՛ քաղաքութեան եւ քէ՛ անոր որ քաղը կ'առնէ այդ քաղաքութեան:

Բայց այն որ քաղատեղեակ չէ կաթողիկէ Եկեղեցւոյ ծագումին եւ հաստատութեան հիմերուն եւ իրաւունքներուն, բնականաբար պիտի հարցնէ այս հանդիսաւոր պահերուն քէ՛ ուսկի՞ց է մեծութիւնը Հռոմէական Գահին եւ հետեւաբար նաեւ իր Գահակալին: Աստուածային կարգադրութեամբ մը արդիւնք եւ կազմակերպութիւն, քէ մարդկային ջանքերով, հնարքներով կամ քաղաքաւոր ձեռք բերուած տիրապետութիւն, ինչպէս կը հանդիպի երկրաւոր պետութեանց մէջ:

Հարցումներ որոնց պատասխանը պէտք է փնտռել Աւետարանին ու Առաքելական եւ Եկեղեցական սրբազան աւանդութեան մէջ եւ ըստ այնմ վաւերացնել փառաւորութիւնը Գահին ու Գահակալին:

Քրիստոս, նոյն ինքն աստուածային իմաստութիւնը մարմնացած, քաղաքացի մարդկութեան իր երկնային վարդապետութիւնը, ցոյց տուաւ հրաշքներով քէ ինքն նշմարիտ Աստուած է եւ աստուածային՝ իր վարդապետութիւնը, իր արիւնով եւ մահով փրկեց մարդկութիւնը եւ գերազանց ապացոյցը տալու համար իր աստուածութեան՝ ինքզինքը յարոյց եւ յետ քառասուն օր շրջելու աշխարհի վրայ՝ երկինք համբարձաւ:

Բայց եթէ պահ մը խորհինք քէ Քրիստոս այդ ամէնը կատարելէն վերջ ելաւ մեկնեցաւ աշխարհէս՝ քողով մարդկութիւնը կամ իրեն հաւատացող ամբոյնները իրենց ճակատագրին, առանց կարգի ու կանոնի, առանց ընկերական որ եւ է տարրական կազմակերպութեան որ ունենար հեղինակութիւն կամ գլուխ, անդամներու փոխադարձ կապ եւ նպատակ եւ միջոցներ այդ նպատակին հասնելու, եւ հոսկ երաշխիք կամ ապահովութիւն այդ ընկերութեան պահպանութեան, իսկապէս անիմաստ բան պիտի ըլլար. ինչ որ անհերքելի է եւ ամբարշտական, քանի որ նմանօրինակ խորհուրդը կամ ենթադրութիւնը նախատինք է Քրիստոսի գերազանց իմաստութեան:

Բայց ով որ ուշի ուշով կը բնէ Աւետարանն ու Եկեղեցւոյ աւանդութիւնը, իսկոյն կ'ըմբռնէ նշմարութիւնը:

Պատմական անմոռանալի օր մըն էր, երբ Քրիստոս իր կենդանութեան, հարց դնելով աշակերտներուն առջեւ քէ մարդիկ կամ իրենք ի՞նչ կը խորհէին իր մասին, կամ գո՞վ կը կարծէին, ուրիշներու տարտամ պատասխաններէն յետոյ Պետրոս առաջ նետուեցաւ եւ դաւանեցաւ քէ «Դու ես Քրիստոսը, Կենդանի Աստուծոյ Որդին» (Մտթ. ԺԶ, 16): Հշմարիտ ու գեղեցիկ պատասխան որ մարդկութեան բախտը պիտի վնոէր եւ միանգամայն Պետրոսի փառքը:

Եւ իսկապէս Յիսուս իր խօսքն ուղղելով Պետրոսի յատկօրէն պատգամեց. «Երանի՛ք քեզի, Սիմոն, Յովնանի որդի, որովհետեւ մարմինն ու արիւնը չյայտնեցին քեզի, այլ իմ Հայրս որ երկինքն է: Եւ ես քեզի կ'ըսեմ. Դու՛ չյայտնեցին քեզի, այլ վէմին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցիս, եւ դժոխքի դռները ես վէմ, եւ այդ վէմին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցիս, եւ քեզի քանի որ կապես երկրիս վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկնքի նալիները. եւ ինչ որ քաղես երկրիս վրայ՝ քաղակուած պիտի ըլլայ երկնքի մէջ: Եւ ինչ որ քաղես երկրիս վրայ՝ քաղակուած պիտի ըլլայ երկնքի մէջ»:

Եւ հաստատելու համար իր անսխալ պատգամը, երբ քողած մարդկութիւնը այլեւս երկինք պիտի վերանար, ինչպէս կանխաւ բոլոր առաքելական խումբին դիմաց զինքը վէմ, հիմ դրած էր Եկեղեցւոյ, այսպէս այդ վերջին եւ հանդիսաւոր բաժանման պահուն Պետրոսի կը յանձնէր իր ծրագրած Եկեղեցւոյ անդամները կամ հպատակները. «Արածէ՛ իմ գառնուկներս, արածէ՛ իմ ոչխարներս» (Յուդ. 16-17):

Քրիստոս քաղած էր քէ ինքն էր քարի հովիւը. եւ ահա Պետրոսի կը յանձնէ այդ հօտը՝ կարծես ըսելու համար քէ՛ ձեզ որք, անհովիւ, անգլուխ չեմ քողուր, ահա Պետրոսը Հովիւ փոխանորդ ինձ՝ որ գերազանց Հովիւն եմ: Ինչպէս որ Քրիստոսի յատուկ էր վէմ կամ քար անունը, ինք իր այդ սեփական անունը տուաւ Սիմոնին գանձիկա վէմ կոչելով եւ կամ հիմ իր Եկեղեցւոյն, ինչպէս գեղեցիկ կերպով կ'ըսէ Շնորհալին.

Եւ զիւրազան անուն վիճին – Շնորհաց նմա զանշարժելին (Յիսուս Որդի): Այսինքն՝ Քրիստոս իր անշարժ վէմ անունը Պետրոսին շնորհեց. (Սիմոն անունը քար-ի փոխելով, նշան նոր պաշտօնին):

Հարկ կա՞յ երբաւ պրպտել ամբողջ Ս. Հայրերն եւ Եկեղեցական պատմութիւնը եւ խնդրել օրինակներ՝ փաստելու համար քէ Պետրոս է իսկապէս Գլուխը Քրիստոսի տիեզերական Եկեղեցւոյն:

Ուրախ ենք որ հոռ եւ գեղուն են մեր Ս. Հայրերու գործերն ալ այդ նշմարութեան փաստերով.



ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՐԻԱՐԿ ԾԻՐ. ՌՈՆԲԱԼԼԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԷՋ
Ուխտիս Գերպո՛. Աբրահո՛ր, Վ.Գ. Հայրերու եւ այլ հրաւիրեալներու հետ (26 - 4 - 1953)

Ս. ԼՈՒՍԱՆՈՐԻԶ (Աղաթ.) - « Պետրոս որ Առաքելներու առաջինն էր եւ երանի տուաւ իրեն Քրիստոս եւ զինքը կարգեց Վէմ Հաստատութեան ամենայն եկեղեցեաց »⁽¹⁾ :

Ս. ՍԱՀԱԿ (Ճառ յղղս. Եկեղ.) - « Գլխաւորը Առաքելական դասին, որ քար կոչուեցաւ. եւ հետեւաբար իրեն վրայ շինուածները անշունչ քարեր չեն, այլ մարդիկ՝ անոր հաւատքին հաղորդակից » :

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ (Գրբ. Պիտոյից) - « Փակակալ արքայութեան, հիմ եկեղեցւոյ » :

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ (Պատմ.) - « Զուրացողս անէ՛ք առ արքայութեան դոնապանն եւ փակակալն Պետրոս » :

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՅԻ (Մեկն. Ժմբ.) - « Գլուխ առաքելոցն Պետրոս, փակողն երկնից արքայութեան... որ եւ վէմ անուանեցաւ ի Տեառնէ եւ հիմն եկեղեցւոյ եղաւ » :

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (Ներք. Ս. Յակ.) - « Առաքելական օրհնեալ խումբին պետը » :

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ (Յիսուս Որդի) - « Առաքելոց գերագունին - Սուրբ հաւատոյ անշարժ վիմին » :

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ (Մեկն. Ա. Պետր.) - « Եւ Պետրոս յորժամ ասեմ, զո՞ւ ասեմ... գայն՝ որ վէմ անուանեցաւ եւ ի հիմունն եկեղեցւոյ եղաւ... գփակողն եւ զբացողն դրանց երկնից » :

Ս. ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ (Մեկն. Պար. ճառ. Եկեղ.) - « Երկրորդ յետ Քրիստոսի գեղք ուսաք, ո՛վ Պետրոս. գլուխ յետ գլխոյն դու նստար աշակերտաց. վէմ հաստատութեան բնաւիցս գեղք էարկ ի հիմն տաճարիս » :

ՅՈՎՀ. ԵՐԶՆԿԱՅԻ (Մեկն. Մարթ.) - « Թէպէտ ամենեքեան գլխաւորք էին, սակայն զՊետրոս նոցին գլուխ կարգէ, եւ ոչ միայն նոցա, այլ եւ գաւառնց եւ ոչխարաց եւ խոյնց հովիւ ընտրէ » :

ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. (Մեկն. Մարկ.) - « Վերնատուն մի մեծ՝ եկեղեցին մեծ է, ուր տէրունական գատիկն է պատրաստեալ. տանուտէր տան՝ Պետրոս առաքելալն է, յոր յանձնեաց Տէրն գտուն իւր. զի եղեւ մի հօտ, եւ մի հովիւ, եւ մի եկեղեցի » :

ՇԱՐԱԿԱՆ. - « Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեր ինեղ գերանելին զՊետրոս՝ գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ » :

ԳՆԱԶԱՐԱՆ. - « Գերագոյն գնդին - գլուխ ընտրեալ հօտին - գահակալ բոյին - Պետրոս հրաշալին - վէմն հաւատին » :

ՅԱՅՍՄԱՆՈՒՐԲ (Յունուար ԻԲ.) - « Առաքելալն Քրիստոսի Պետրոս, վէմն հաւատոյ եւ գլուխ եկեղեցւոյ սրբոյ » :

ՅԱՅՍՄԱՆՈՒՐԲ (Հոկտ. ԻԳ.) - « Պետրոս վէմն հաւատոյ եւ մեծն ամենայնի, երեսփոխանն Քրիստոսի » :

Բայց այդքան դրուատուած, այդքան պանծալի Պետրոսը կնքեց իր մահկանացուն եւ անդարձ հեռացաւ աշխարհէս :

Անշուշտ անտեղի է խորհիլ քէ անոր մահով քանդուեցաւ հիմը եկեղեցւոյ կամ Քրիստոսի հօտը մնաց անհովիւ :

(1) Գրաբար զժուարիժաց տեղերը աշխարհաբար զբնէ՛ք՝ ընթերցողներուն զիւրաւ հասկնալի ըլլալու համար :



Ծիր. Ռոմֆալի (Կեղրոնը) եւ իր Օգն. եպիսկոպոսը Գերպո. Օլիվոքքի (Իր աջին)
Ս. Ղազարու մեծ դակիին մէջ, Միաբանութեան վ. Հայրերուն հետ,
Գերպո. Սրապիոն վ. Ուլուհոնեան Աբրահոյ վերընտրութեան առիթով (17 - 7 - 1958)

Աստուածային անսխալ պատգամ է « Դու եւ վէմ » որուն պիտի չկարենան յաղթել դժոխքի իշխանութիւնները. « Արածէ գառներս եւ ոչխարներս », այսինքն մինչեւ աշխարհի վերջը եկող սերունդները, քանի որ Քրիստոս իր եկեղեցւոյն հետ է միշտ. « Ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհիս կատարածը » :

Ուսկից կը հետեւի որ ամէն անգամ որ կ'ընտրուի Պետրոսի արքունի վերայ իր պաշտօնը շարունակողը՝ Քրիստոս կը նորոգէ իր պատգամը. « Դու եւ վէմ ». « Դու արածէ իմ գառներս եւ ոչխարներս » :

Այսպէս է Աստուծոյ նախախնամութիւնը, Քրիստոսի անսխալ եւ անփոխարինելի կարգադրութիւնը :

Եւ արդարեւ ի՞նչ տխուր եւ ցաւալի պիտի ըլլար եկեղեցւոյ նախապաշտօնաւորներէ չըլլար Պետրոսը հովիւ, կապող եւ արձակող. քննիչ եւ իրաւաբար, անսխալ վարդապետ մարդկային մոլորութեանց բաւիղներուն մէջ, հովուապետ որ քաջալերէր հովիւները, իրաւունք տար անմեղին, պատուհասէր մեղաւարտը, կտրէր մերժէր մոլորեալն ու մոլորեցուցիչը. ժողովէր հովիւները, առաջնորդէր, վաւերացնէր՝ վաւերացնելիք եւ մերժէր սխալը եւ դատաւարտէր :

Բայց ո՞ր է տիեզերքին մէջ արքունի այդ իշխանութեան, եւ ո՞վ է անոր գահակալը, ո՞ր է բովանդակ եկեղեցւոյ Հովուապետը, Պետրոսը կենդանի : Եւ անշուշտ հոն է՝ ուր նա հաստատեց իր արքունի՝ աշխարհէս մեկնելէն առաջ :

* * *

Ս. Եկեղեցին հաստատուած, Առաքեալներն սկսեցին Գրիստոսի պատգամին համեմատ « Աշակերտեցե՛ք գամեայն հեթանոսս » : Եւ ահա առաջին հալածանքը : Զոհերու կարգին է նաեւ Պետրոս՝ հրեաներու մատնութեամբ բանտ նետուած Հերովդէսի ձեռքով :

Դժոխքն է որ սկսեց եր պատերազմիլ՝ Եկեղեցւոյ հիմը քակելու :

Աստուածային հրաշալի միջամտութեամբ բանտէն գերծած Գալիլեացի ձկնորսը կտրեց ծով ու ցամաք եւ ոտքը դրաւ Հռովմական տիեզերական պետութեան մայրաքաղաքը : Հոն էր սատանան իր աթոռը դրած, ուր փոխանակ Արարչին՝ Հոմի եւ բոլոր ազգերու չաստուածներ կը պաշտուէին, ու կը պաշտուէին մարդիկ – կայսրները : Եւ մեծ ու պանծալի քաղաքը դարձած էր կեդրոն կռապաշտութեան եւ ամէն տեսակ պղծութեան եւ ապականութեան :

Պետրոս, անշուշտ աստուածային ներշնչումով, եկած էր այդտեղ ընելու կեդրոնը եւ հիմը նշմարիտ աստուածապաշտութեան, ուղղափառ հաւատին :

Խոնարհ ու ազատ առաքեալը, մերկ եւ անզէն, իր կեանքը կը վերջացնէր անարգ խաչի վրայ՝ ինչպէս իր Տէրը, եւ իր արիւնը Փրկչին արեան խառնելով կը հաստատէր կեդրոնն ու գահը Բրիտանիայի տիեզերական կայսրութեան որ Եկեղեցին է :

Ու հետզհետէ Պետրոսի կը յաջորդէին նոր Հովուապետներ. անոնց քիւր մինչեւ օրս 259 է, վերջինը Յովհաննէս ԻԳ. նորընտիրը : Այդ շարքին մէջ կը տեսնուին 79 սուրբեր, ու անոնք եղած են գանազան ազգերէ եւ ցեղերէ. հռոմայեցի, իտալացի, յոյն, ասորի, գերմանացի, գաղղիացի, սլաւոնացի եւ այլ արեւմտեան ազգերէ :

Այդ Աթոռին կը դիմեն հալածուածներ՝ արդարութիւն պահանջելու, ինչպէս Աթանաս, ինչպէս Ոսկեբերան կամ Մաքսիմոս, Փլաքիանոս, Թէոփրեոս, Ս. Յովհաննէս Գահագուրկ, Յովհ. պատրիարք Աղեքսանդրիոյ : Մինչեւ անգամ հերետիկոսներն ալ որ կը մերժուին, ինչպէս Մարկիոն, ինչպէս Եւտիքէս եւ ուրիշներ :

Այդ Աթոռը կը գահազրկէ Դիոսկորոսը եւ Քաղկեդոնի ժողովի Հայրերուն կը պարտադրէ իր վճիռը : Նիկիոյս Ա. կը գրէր առ Միքայէլ կայսր քէ ուր պատրիարքներ գահազրկուած էին Հոմի Ս. Աթոռին ձեռքով : Այսպէս Ս. Դամասոս Լառդիկէի Ապոլինար Եպս.ը եւ Տիմոթէոս Աղեքսանդրիոյ Եպս.ը կը գահազրկէր :

Ինք է որ իր փոխանորդներով կը նախագահէ Տիեզերական ժողովներուն, ինք գանձում կը հաստատէ իր առաքելական իշխանութեամբ :

Հեթանոս Հոմը սուրով է տիրապետած տիեզերքին, իսկ Բրիտանիայ Հոմը՝ սիրով ու խաչով :

Սուրի քաղաւորութիւնը Բրիտանիայէն մինչեւ Հայաստան կը հասնէր, Դանուրի ափերէն մինչեւ Ափրիկէի աւազուտ անապատները :

Իսկ սիրոյ քաղաւորութեան տիրապետութիւնը սահման չունի, որովհետեւ Եկեղեցին է ան՝ Բրիտոսի համատարած քաղաւորութիւնը՝ բոլոր տիեզերքը բռնած :

Հեթանոս Հոմը իր խրոխտ պատգամաւորներով անձնատուութիւն կը պարտադրէր. իր ոտքը կը բերէր ազգեր ու քաղաւորներ :

Խաչի Հոմը Բրիտոսի խոսքն է որ կը տարածէ սիրոյ եւ խաղաղութեան պատգամով՝ անոնց որ կը հնազանդին իրեն որպէս Պետրոսի :


Ոչ մէկ գէնք ունի, ոչ մէկ զօրութիւն, բայց տիեզերքի բոլոր գէնքերէն ու հնարքներէն գերազույց է եւ յաղթող խաչը որ կը քարոզէ եւ խաչակիր Բրիտոսը :

Ու իր առաքեալները կ'երբան կը վարգեն աշխարհներ ու պետութիւններ, ու կը հասնին երկրիս ամէնէն հեռուոր ու անձանօք վայրերն իսկ. ոչ մէկ զօրութիւն, ոչ մէկ պետութիւն, ոչ հալածանք եւ ոչ ամէնէն դառն մահուան սպառնալիքներ կրնան կանցնել անոնց պատգամաւորութիւնը. Պետրոսի յաջորդն է զիրենք որկալը « Գնացե՛ք աշակերտեցե՛ք գամեայն հեթանոսս » շարունակելով Բրիտոսէ առած պատուէրը :

Հալածողներու սուրբը կը բթանան, կայսրութիւններն իր շուրջը կը կործանին, իսկ նա հոն է անշարժ ու անյաղթելի, համեմատ աստուածային խոստումին :

Իր առաքեալներէն հայերուս ալ կը հասնին « Անձինք նուիրեալք » որոնց արիւնը հայ հողը կ'արգասաւորէ, հայ Բրիտանիայիւնը կը բուսցնէ. Հոփսիւնանք էին ատոնք. « Կանայք պատուականք քաղաքաւ եւ ազգաւ... վաճառականք անյայտ մարգարտին... », ինչպէս կ'երգէ Կոմիտաս կաթողիկոս. եւ յետոյ իր կարգին Շնորհալին :

« Հանձարեղ շնորհալիդ ընտրեալ է,
Յարքայից հզօրաց զարմէ է
Մեզ պարգեւ ի տանէ լատինէ
Հրեշտակ հրաշագեղ Հոփսիւնէ » :



ՄԻՐ. ՌՈՆԻՍԼԻ, վաճառական առջեւ, կ'ընդունի յարգանքը Ուխտիս աշակերտութեան
(17 - 7 - 1958)

Թէ այդ է Առաքելապետին աթոռը եւ անոր գահակալը Պետրոսի յաջորդ՝ ցոյց կու տայ ամբողջ եկեղեցւոյ հաւատքը, Ս. Ժողովներու վկայութիւնը, Ս. Հայրերու միաձայն պատգամը:

Զանց ընելով Ս. Պօղոսի գովեստը Հռոմի եկեղեցւոյն թէ « Հաւատք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ », կ'արժէ յիշել գեղեցիկ տողերը Ս. Իգնատիոս աստուածադպեաց առաքելական Հօր՝ ուղղուած Հռոմի եկեղեցւոյն. « Իգնատիոս որ եւ աստուածային աստուածագետ մեծութեամբն Հօր բարձրելոյ, Հօր Յիսուսի Քրիստոսի միաձնի որդւոյն իւրոյ, եկեղեցւոյ լուսաւորելոյ եւ սրբեցելոյ կամօք այնորիկ որ գամենայն կամեցաւ որ ինչ ըստ հաւատոցն եւ սիրոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ, որ նստի ի տեղուդ վայրիդ Հռոմայեցոց, արժանի Աստուծոյ, արժանի վայելչութեան, արժանի երանութեան, արժանի գովութեան, արժանի դիպելոյ, արժանի սրբութեան եւ առաջնորդ սիրոյ » (Προκαθήμενῃ τῇς ἀρχαίης):

Եւ քանկագին վկայութիւնը Ս. Երանոսի՝ հետեւողի Առաքելոց. « Հարկ է որ բոլոր եկեղեցիները այս եկեղեցւոյն (Հռոմի) համաձայնին, այսինքն բոլոր հաւատացեալները, անոր գերագոյն իշխանութեան պատնառով »:

Ս. Յ. Ոսկեբերան կը կոչէ « վերակացու համօրէն աշխարհի եւ գլուխ Քրիստոսի ընտանեաց » որ է եկեղեցին:

Եփեսոսի Ս. Ժողովին Հայրերը նեստորը դատապարտած ատեն կ'արձանագրեն վնասն մէջ. « Սուրբ կանոններէն եւ մեր ամենասուրբ Հօրը եւ ծառայակցին՝ Կեղեստինոսի Հռոմի եկեղեցւոյն Եպիսկոպոսի թուրքէն ստիպուած, արցունքով եւ հարկէն յանգեցանք այս ցաւալից վնասն »:

Քաղկեդոնի Ս. Ժողովին Հայրերը Ս. Լեւոն Քահանայապետին ուղղելով. « Որովհետեւ դու կը նախագահէիր իբրեւ գլուխ մեզի անդամներու » եւ յետոյ « Պետրոս խօսեցաւ Լեւոնի բերնով »:

Բայց ահա տիեզերական հանդէսը մեծ Գահակալին. եւ ի՞նչ աւելի գեղեցիկ եւ հանոյական գովեստ կամ բարեմաղթութիւն կրնանք հիւսել ի պատիւ Իրեն եւ իր աստուածանուէր Գահին, կամ ի՞նչ քանկագին նուէր տանիլ արժանի մեր ազգային պատուին, բայց եթէ ներկայացնել մեր Ս. Հայրերու եւ եկեղեցական ժողովներու սրտաբուխ արտայայտութիւնները որ կը պանծացնեն նոյն ինքն այդ Աթոռն ու Աթոռակալը, այսպէս խառնելով Հայ եկեղեցւոյ հաւատքին ներդաշնակ նուագը կաթողիկէ աշխարհի տիեզերական համերգին:

Ահա փունջ մը նուիրական վկայութիւններու:

Զաքարիա Կաթողիկոս (Թ. դար). « (Քրիստոս) յառաջ քան զծնանելն ի Բեթղեհէմ՝ տայ գերկալութիւն պետութիւնն ի Հռոմայեցիսն... քանզի ի Հռոմ հանդերձեալ էր կարգել գաթոռն Պետրոսի եւ Պօղոսի, եւ զգլխաւորութիւն եկեղեցւոյ »:

Ս. Ներսէս Շնորհալի կը զրէր առ Կիւ Մանուէլ Կայսր.

« Նա զի եւ լուսնի թէ սուրբ եւ առաջին ամենայն Եպիսկոպոսաց Հայրապետն Հռովմայ եւ փոխանորդն Պետրոսի առաքելոյ՝ յիւրոց անտի իմաստնոց առաքեաց խօսել առաջի սուրբ քաղաքութեանդ ձերոյ վասն միութեան հաւատոյ »:

Նոյն Շնորհալի Հայրապետը կ'երգէ « Ողբ Նդեսիոյ » մէջ.

« Եւ դու Հռովմ մայր քաղաքաց - Գերապայծառ եւ պատուելի
Մեծին Աթոռդ Պետրոսի - Առաքելոց գլխաւորի »

Եկեղեցիդ անշարժելի - ի կեփայեան շինեալ վիմի
Դրանց դրժոյտոց անվանելի - եւ կնիք երկնիցն բացողի »:

Գրիգոր Զ. Կաթողիկոս (Ապիրատ) 1198ին առ Իննովկենտիոս Ս. Քահանայապետ գրած թուրքին մէջ. « Գլխոյն յետ Քրիստոսի, օծելոյ ի նմանէ, եւ բազմելոյ ի գլուխ Կաթողիկէ եկեղեցւոյն Հռովմայ՝ որ է մայր ամենայն եկեղեցեաց, իմաստնոյ եւ սրբոյդ՝ որպէս եւ զիարդ վայելէ առաքելոցն տեղակալի, գահանիստ պապիդ եւն. Գրիգոր ծառայ Յիսուսի Քրիստոսի, շնորհօքն Աստուծոյ Կաթողիկոս համօրէն Հայաստանեայց եկեղեցւոյ որդի ձեռնադրելով Եկեղեցւոյ սրբոյ՝ որ է հիմն օրինաց քրիստոնէութեան առ հասարակ... Յորժամ Դուք որ գլուխդ էք՝ ողջ իցէք, մեք՝ որ մարմինս եմք՝ քաջառողջ գոռանմիւք ձերով օրհնութեամբ... եւ մտադիր ընդգրկեմք զօրէնս եւ զեղբայրութիւն բարձրապատիւ եկեղեցւոյդ Հռովմայ, որ մայրն է ամենայն եկեղեցեաց »:

Ուրիշ նամակի մը մէջ՝ նոյն մեր Կաթողիկոսը կը գրէր առ նոյն Ս. Պապը. « Յետ Աստուծոյ գլխոյն ամենայն բարութեանց, առաքելական աթոռակալիդ, եւ գերագոյն գլխոյն համօրէն եկեղեցւոյ եւ ամենայն երկրաւոր աթոռոյ, մեծ խոստովանողիդ Քրիստոսի, նախկին օրհնանի ամենայն ժողովրդիդ, եւ կրօնի, եւ յաջորդի երանելոյն Պետրոսի, անդրանիկ իշխանիդ զկնիքիդ Գրիգորս ի մարմնի քու, Իննովկենտիոսի շնորհօքն Աստուծոյ ծայրագոյն Քահանայապետի, եւ ընդհանրական Պապի մեծագահն Հռովմայ... Գրիգոր նուստ Եպիսկոպոս՝ Կաթողիկոս ամենայն Հայոց »:

Սուրբ Զ. Ժողովը 1342ին (Միսիոնար Կաթ. ի օրով) « Առաջին եւ երկրորդ ժողովներուն մէջ նիկիական Հայրերը վնասեցին թէ եկեղեցին Հռովմի գլուխ է միւս եկեղեցիներուն. նմանապէս Հռովմի հայրապետը վեհագոյն է քան միւս հայրապետները. արդ՝ մենք այսպէս կ'ըսենք եւ կ'ընդունինք, ոչ միայն անոր համար որ Ս. Ժողովին մէջ սահմանուած է, այլ որովհետեւ Քրիստոս իր ոչխարները Պետրոսի յանձնեց արածելու »:

Աբգար զպիր պատգամաւոր Հայ Կաթողիկոսին առ Ս. Պապն Պիոս Դ. « Դու արդարեւ չորից մասանց տիեզերաց մեծ քահանայապետ ես. գոր միանգամ դու արձակեցես՝ եղիցի արձակեալ, եւ գոր կապեցես՝ եղիցի կապեալ... »

« Իսկ որ միանգամ ի մէջ ոչ դաւանի գաթոռն Պետրոսի լինել մեծագոյն եւ զՏէր Քահանայապետն Հռովմայ՝ գլուխ եւ հայր բոլոր աշխարհի եւ ծառանգորդ փականաց, այնպիսին ուրացող է Աւետարանի եւ Նրուսաղեմայ եւ Լուսաւորչեան Աթոռոյ էջմիածնի »:

Յակոբ Զուղայեցի Կաթողիկոս. « Ես Քրիստոսի նուստ ծառայ Յակոբ Կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք վաղարշապատու լուսակառոյց մեծի եւ սրբոյ Աթոռոյն էջմիածնի... հաւատամ զնոյն ինքն գաւրբ եկեղեցին Հռովմայ ունել լի եւ գերագոյն իշխանութիւն եւ պետութիւն ի վերայ ընդհանրական Կաթողիկէ եկեղեցւոյ: Հաւատամ եւ զվեհապետն նմին սրբոյ եկեղեցւոյ՝ Աթոռակալ եւ փոխանորդ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, կապող եւ արձակող ի յերկինս եւ ի յերկրի »:

Նահապետ Կաթողիկոս գրելով առ Իննովկենտիոս ԺԲ. (1695ին) « Նրիցս

